# ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ.

## «ԵՍ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՄ, ՈՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԵԱՀԽ-Ի ՋԱՆՔԵՐԸ ԿՀԱՋՈՂՎԻ ԿՈՈՐԴԻՆԱՑՆԵԼ»

«Ազատություն» ռադիոկայանը սեպտեմբերի 15-ին հաղորդել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտգործնախարար Արկադի Ղուկասյանի հետ ռադիոկայանի հայկական բաժնի թղթակցի Վիեննայում ունեցած հարցազրույցը, որում, մասնավորապես, ասվել է. «Մինսկի խմբի Վիեննայի եռօրյա բանակցություններում հիմնականում քննարկվել է 2 հարց. Ռուսաստանի և ԵԱՀԽ-ի նախաձեռնությունների կոորդինացման և երկրների հնարավորությունները միջազգային ուժեր ստեղծելու և ռեգիոն ուղարկելու հարցերը: Կոնկրետ փաստաթղթեր չեն քննարկվել, դժվար է ասել դիրքորոշումների փոփոխության մասին: Դժբախտաբար, շարունակվում է մրցակցությունը Ռուսաստանի և ԵԱՀԽ-ի միջև, որը չի օգնում ընդհանուր գործին: Ես հույս ունեմ, որ նրանց ջանքերը կհաջողվի կոորդինացնել: Ես չեմ բացառում, որ Ռուսաստանը միտում ունի շրջանցելու ԵԱՀԽ-ի ջանքերը, բայց Կազիմիրովի բացակայությունը բացատրեցին, թե հանդիպումը նախատեսված էր 21-ին և այդ պատճառով Ռուսաստանը չկարողացավ մասնակցել, մանավանդ հիմա Մոսկվայում շարունակվում են բանակցությունները Ռուսաստանի նախաձեռնության շրջանակներում: Գուցե դա էր Կազիմիրովի բացակայության հիմնական պատճառը: Մեր կարծիքով, այդքան էլ կարևոր չէ, թե ինչ խաղաղարար ուժեր կլինեն, կարևորը ռեգիոնի խաղաղությունն է: Ես համոզված եմ, որ առանց Ռուսաստանի զորքերի հնարավոր չի լինի կարգավորել բոլոր հարցերը: Ինչ վերաբերում է միջազգային ուժերին, ապա, որքան ես գիտեմ, Ռուսաստանը դեմ չէ: Ինձ թվում է, որ կարելի է միայն ողջունել նաև այլ պետությունների ուժերի մասնակցությունը: Ես կասեի, որ Ադրբեջանի դիրքը մնում է խիստ, և եթե այդպես շարունակվի, ես չեմ հավատում, որ մոտ ժամանակներս հնարավոր կլինի կարգավորել հարցը. այդպիսի մոտեցումով հնարավոր չէ լուծել հարցը: Զիջումները միայն Լեռնային Ղարաբաղի կողմից չեն կարող լինել: Մենք համոզված ենք, որ ոչ մի կողմ չի ստանա այն մաքսիմումը, որ ինքը նախատեսում է, և դա առաջին հերթին վերաբերում է Ադրբեջանի ղեկավարությանը: Նրանք ուզում են միանգամից ամեն ինչ ստանալ ոչ մի բան չտալով, ոչ մի զիջում չանելով: Դա կոնստրուկտիվ դիրք չէ, և ես հույս ունեմ, որ Ադրբեջանի ղեկավարության դիրքը կփոխվի: Եթե դա չեղավ, ապա դա նշանակում է, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստվում է նորից պատերազմի: Ես կարծում եմ, որ այդ պատերազմի սպառնալիքը լուրջ է: Ես համոզված եմ, որ ոչ միայն Ադրբեջանի ընդդիմությունը, այլ երկրի ղեկավարությունն էլ դեմ է ռուսական զորքերին, բայց առանց ռուսական զորքերի դժվար է պահպանել խաղաղարար օպերացիաները: Ես որքան հասկացա Ադրբեջանը դեմ է առանձին ռուսական զորքերին: Եթե լինեն զորքեր ուղարկող տարբեր երկրներ, ուրեմն այդ հարցը կլուծվի: Ես չեմ բացառում, որ եթե Ալիևը համաձայնի ռուսական զորքերի տարբերակին, Ադրբեջանում կսկսվի քաղաքական նոր ճգնաժամ:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ